Զարգացման հետ կապված մտահոգությո՞ւն ունեք:

Ինչպես օգնություն ստանալ ձեր երեխայի համար

Բժշկի հետ խոսելը ձեր երեխայի համար օգնություն ստանալու առաջին քայլն է, եթե մտահոգված եք նրա զարգացումով (ինչպես է ձեր երեխան խաղում, սովորում, խոսում, գործում կամ շարժվում): **Մի սպասեք**: Վաղ գործելը կարող է իրական տարբերություն տալ:

1 Հանդիպում նշանակեք ձեր երեխայի բժշկի հետ

- Հանդիպում նշանակելիս հայտնեք բժշկի անձնակազմին, որ ունեք ձեր երեխայի զարգացման հետ կապված մտահոգություններ, որոնք կցանկանայիք քննարկել բժշկի հետ:

2 Լրացրեք հիմնական ձեռքբերումների ստուգաթերթը

- Նախքան հանդիպումը լրացրեք հիմնական ձեռքբերումների ստուգաթերթը՝ ներբեռնելով CDC-ի անվճար *Milestone Tracker* **բջջային հավելվածը** App Store-ից կամ Google-ից:
- Գրեք ձեր հարցերն ու մտահոգությունները, վերցրեք դրանք ձեզ հետ բժշկի հետ հանդիպման ժամանակ:

3 Բժշկի հետ հանդիպման ժամանակ

- Ցույց տվեք բժշկին հիմնական ձեռքբերումների լրացված ստուգաթերթը
  - Եթե ձեր երեխայի մոտ **չկան** հիմնական ձեռքբերումներ, մատնանշեք դրանք և կիսվեք ձեր ցանկացած այլ մտահոգությամբ:
  - Եթե ձեր երեխան **ունի** հիմնական ձեռքբերումներ, սակայն դուք, միևնույն է՝ անհանգստություններ ունեք, այդ մասին հայտնեք բժշկին:
- Խնդրեք բժշկին ձեր երեխայի զարգացման սքրինինգ անցկացնել:
  - Զարգացման սքրինինգը խորհուրդ է տրվում ամեն անգամ, երբ կա մտահոգություն: Այն բժշկին ավելի շատ տեղեկություններ է տալիս՝ պարզելու, թե ինչպես լավագույնս օգնել ձեր երեխային:
  - Զարգացման սքրինինգի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.cdc.gov/DevScreening:
- **Հարցրեք բժշկին՝ արդյոք ձեր երեխան հետագա զարգացման գնահատման կարիք ունի**
  - Եթե ձեր երեխան դրա կարիքն ունի, խնդրեք ուղեգիր և անմիջապես զանգահարեք: Եթե դուք դժվարանում եք հանդիպում նշանակել, տեղեկացրեք բժշկին:

4 Համոզվեք, որ հասկանում եք, թե ինչ է ձեզ ասում բժիշկը և թե ինչ անել հետո

- Նախքան հանդիպումից հեռանալը՝ ստուգեք ձեր գրառումները և համոզվեք, որ ձեր բոլոր հարցերին ստացել եք պատասխաններ:
- Եթե դուք որևէ բան չեք հասկանում, խնդրեք բժշկին բացատրել այն կրկին կամ այլ կերպ:
- Երբ տուն վերադառնաք, վերանայեք ձեր գրառումները և հետևեք բժշկի կողմից ձեզ տրված քայլերին: Հիշեք, որ ցանկացած հարցի դեպքում միշտ կարող եք դիմել բժշկի գրասենյակ:

Կապ հաստատեք՝ զանգահարեք 833.903.3972, **այցելեք** HelpMeGrowLA.org, **կամ հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժշկին**:

Դուք ամենից լավ եք ճանաչում ձեր երեխային

Եթե ձեր երեխայի բժիշկը ձեզ ասել է «սպասել և հասկանալ», բայց դուք անհանգստացած եք այդ խորհրդից.

Խոսեք ուրիշների հետ (բժիշկ, ուսուցիչ, մեկ այլ մատակարար)՝ երկրորդ կարծիք ստանալու համար

ԵՎ

Զանգահարեք անվճար գնահատման համար՝ պարզելու, թե արդյոք ձեր երեխան կարող է անվճար կամ ցածր արժեքով ծառայություններ ստանալ, որոնք կարող են օգնել:

Եթե ձեր երեխան 3 **տարեկանից փոքր է.**
Զանգահարեք ձեր նահանգի Վաղ մեկնարկի միջամտության ծրագրին (Early Start intervention program): Գտեք հեռախոսահամարը հետևյալ հասցեով՝ www.cdc.gov/FindEI

Եթե ձեր երեխան 3 **տարեկան կամ ավելի բարձր տարիքի է.**
Զանգահարեք տեղական հանրային տարրական դպրոց:

Ձեր երեխային ծառայություններից օգտվելու նպատակով գնահատման համար ձեզ բժշկի ուղեգիր պետք չէ:

Մի սպասեք: Վաղ գործելը կարող է իրական տարբերություն տալ:

HMGLA 109 3/2023 (Armenian)

Help Me Grow LA is a collaboration between first 5 la and County of Los Angeles Public Health